



## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

**Փոխառություն No. 3293 – ARM: Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր – Ծրագիր 2**

**ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՈՐԱԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ (CQS)**

**-Հետաքրքրության հայտերի ներկայացման հրավեր (ՀՀՆՀ)**

**ԱՐՏԱՔԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ (ԱՄԳ)**

Ամսաթիվ	12 ապրիլի, 2016 թ.
Փոխառություն No	L3293-ARM Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր – Ծրագիր 2
Պայմանագրի համար և վերնագիր	CQS-CS-01-SUDIP-2: Արտաքին մոնիթորինգի գործակալություն (ԱՄԳ)
ՀՀՆՀ ներկայացնելու վերջնաժամկետ	12 մայիսի, 2016թ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Կառավարություն) դիմել է Ասիական զարգացման բանկին (ԱԶԲ) Բազմատրանշ ֆինանսական գործիքի (ԲՖԳ) Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր-Ծրագիր 2-ի (Ներդրումային ծրագիր) շրջանակներում Արտաքին մոնիթորինգի գործակալության խորհրդատվական ծառայությունները ֆինանսավորելու խնդրանքով: Երևանի քաղաքապետարանը (ԵՔ) հանդիսանում է իրականացնող գործակալությունը և գործում է որպես Ներդրումային ծրագրի երկրորդ տրանշի Գործատու: ԵՔ-ն կվարձակալի խորհրդատվական ընկերությունը ԱԶԲ-ի *խորհրդատուների օգտագործման ուղեցույց-Մարտ, 2013-ի* համաձայն (*որը ենթարկվում է փոփոխության ժամանակ առ ժամանակ*):

2. Խորհրդատվական ընկերությունը կիրականացնի Հողի օտարման և տարաբնակեցման ծրագրի (ՀՕՏԾ) պատրաստման, իրականացման և հետ-իրականացման գործընթացների մոնիթորինգ, կնշի խնդիրները և կառաջարկի լուծումներ իր անունից և Երևանի քաղաքապետարանի, որ հանդիսանում է Ներդրումային ծրագրի Իրականացնող գործակալությունը, և ԱԶԲ-ի հետ և համագործակցմամբ: ԱՄԳ-ը մոնիթորինգի կենթարկի և կստուգի ՀՕՏԾ պատրաստումը և իրականացումը՝ որոշելու, արդյոք տարաբնակեցման նպատակներն իրականացվել են, ապրելամիջոցը և ապրուստի չափանիշները վերականգնվել են և տրամադրելու առաջարկություններ բարելավման համար: ԱՄԳ-ի աշխատանքների շրջանակը նաև

կներառի դաշտի կարգավիճակը, փոխհատուցումների, հատկացումների և բողոքների լուծման գործընթացները:

3. Գնումներին առնչվող տեղեկատվություն.

Ընտրության մեթոդ՝	CQS
Պայմանագրի տեսակ՝	Միանվագ վճարումով
Բյուջե՝	\$110,000
Մարդ-ամիս՝	17 մարդ-ամիս
Առաջարկի տեսակ՝	Կենսագրական տվյալներով տեխնիկական առաջարկ
Հանձնարարականի տևողություն՝	24 ամիս
Մեկնարկի նախնական ամսաթիվ՝	Հունիս, 2016թ.
Ավարտման ենթադրյալ ամսաթիվ՝	Հունիս, 2018թ.
Խորհրդատուի տեսակ՝	Տեղական խորհրդատու

ՀՀՆՀ-ի ներկայացում.

Խնդրում ենք ներբեռնել "word" փաստաթուղթը՝ հետևելով <http://www.adb.org/sites/default/files/page/83267/eoi-consulting-firms-20131114.doc> հղմանը, և լրացնել այն ու ներկայացնել ներքոնշյալ հասցեով: Հետաքրքրության հայտերի ներկայացման հրավերը (ՀՀՆՀ) պետք է ներառի մանրամասն տեղեկատվություն Խորհրդատուի կազմակերպական կարողությունների, փորձի, նախկին կատարողականների վերաբերյալ՝ զարգացած և զարգացող երկրներում իրականացված ծրագրերում, ակնհայտ իրազեկվածություն տարածաշրջանում (Հայաստան, Կովկասյան և/կամ այլ ԱՊՀ երկրներ) աշխատելու մարտահրավերներից, ինչպես նաև կարող է ներառել երաշխավորագրեր նախկին պատվիրատուներից: ՀՀՆՀ-ի (անգլերեն լեզվով) մեկ բնօրինակ և երեք պատճեն պետք է ներկայացվի կնքված ծրարով ընկերության անունով և հասցեով և նշագրված լինի **"CQS-CS-01-SUDIP-2: External Monitoring Agency (EMA)"**:

ՀՀՆՀ-ները պետք է ներկայացվեն ոչ ուշ քան 2016 թ. մայիսի 12-ին ժամը 17:00 հետևյալ հասցեով՝

Գնումների մասնագետ պարոն Արման Պետրոսյանին  
Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր-Ծրագիր 2  
"Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ"  
ՀՈԱԿ  
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010  
Բուզանդի 1/3, 5-րդ հարկ, 511 սենյակ

Ի լրումն, ՀՀՆՀ-ի էլեկտրոնային տարբերակները պետք է ուղարկվեն [arman.petrosyan@yerevan.am](mailto:arman.petrosyan@yerevan.am) էլեկտրոնային հասցեին նախնական տեղեկատվության համար, սակայն այս էլեկտրոնային տարբերակները չեն համարվելու պաշտոնական ներկայացում: Միայն ստանդարտ ձևերի տպագրված տարբերակները՝ ներկայացված "ԵԿՆ ԾԻԳ" ՀՈԱԿ և ստացված մինչև սահմանված ժամկետը, պատշաճ կերպով կգնահատվեն: